(644—656) Նա գրեց Մուաւիային, որ Նորա կառավարիչն էր Ասորիքում, Միջագետքում եւ Յունաց սահմանագլխում, հրամայելով Հայաստան ուղարկել Հաբիբ ի. Մասլամա-ալ-Ֆիհրին. այս Հաբիբը քաջ զինուոր էր հանդիսացել Ասորիքի նուաճման եւ Յունաց դէմ արշաւանաց ժամանակ. այս բանի մասին գիտէր Օմար, յետոյ Օսման եւ ապա Նորա փոխանորդը. ըստ այլոց՝ հակառակն՝ Օսման գրեց Հաբիբին անձամբ, հրամայելով արշաւել Հայաստանի վերայ, եւ այս տեղեկութիւնն աւելի ճիշդ է: Հաբիբ արշաւեց 16.000, ըստ այլոց՝ 18.000 զօրքով Ասորիքի եւ Միջագետքի բնակիչներից, եկաւ Կարին եւ պաշարեց քաղաքը: Բնակիչք դուրս ելան ընդդէմ, պատերազմեցին Նորա հետ, բայց ստիպուած եղան քաղաքում պաշտպանուել եւ խնդրել իրանց խնայել այն պայմանով, որ հեռանան քաղաքից, (իսկ մնացողները) մարդագլուխ տուրք վճարեն: Նոցանից շատերը թողին գնացին եւ բնակեցան Յունաց հողի վերայ: Հաբիբ մնաց այստեղ իւրայիններով մի ամիս:

Ապա լուր ստացաւ Հաբիբ, որ պատրիկ[1] Արմենակ մեծ զօրք է գումարել մուսլիմների դէմ եւ Նորա հետ միացել են օգնելու համար Ալանք, Ափխազք եւ Խազարներից Սամանդարք:[2] Հաբիբ

---

1 Patricius, πατρίκιος տիտղոս կրում էին նաեւ Յունաց հպատակ քրիստոնեայ իշխաններն Փոքր եւ Առաջաւոր Ասիայում. մեզանում 'իշխան, կամ 'տեր, իմաստով կը գործածուէր. (հմմտ. Թ. Երզրունի՝ Պատրիկ Գնունի, Պատրիկ Ռնձեւացի, Վարդ Պատրիկ Ռշտունի): Արդեաւ անուան մասին տես էջ 28:

2 Երեւի, խազարները կը բաժանուէին զանազան ցեղերի, որոնցից մէկը Սամանդարք էին: Istaxri: Խազարաց երկրում, Խիլի (Հաշտարխանի) եւ Բաբ-էլ-Աբուաբի մէջ Սամանդար անունով մի քաղաք կայ: Ibn el Athir կ'յիշէ Ափխազներին (أبخاز) դեռ Անուշիրվանի ժամանակ. "Ափխազք, Բանջարք, Բալանջարք եւ Ալանք համաձայնեցան միմեանց հետ արշաւել Անուշիրվանի երկրի վերայ եւ ու-